



Համատիրության սեփականատերերի ազգային ընկերակցություն

National Association of Condominiums Owners

Համատիրության սեփականատերերի ազգային ընկերակցության գործունեության ոլորտը՝ բնակարանային տնտեսությունն է և բնակարանատերերի շահերի պաշտպանությունը :

Կազմակերպության հիմնական **նպատակները** ընդգրկում են.

- բնակֆոնդի արդյունավետ կառավարումը, շահագործումը և սպասարկումը,
- կառավարման նոր և ժամանակակից մեթոդների, տնտեսական մեխանիզմների օգտագործման շնորհիվ բնակարանային ֆոնդի զարգացման ապահովումը,
- բնակարանատերերին կոմունալ ծառայությունների մատուցման առավել ժամանակակից մեթոդների ընտրության աջակցությունը,
- բնակարանների և շինությունների սեփականատերերի կապիտալի ավելացումը նրանց սեփականություն հանդիսացող տարածքների բարեկարգման և զարգացման շնորհիվ,
- տեղական ինքնակառավարման, պետական, գերատեսչական և այլ կառավարման մարմինների համար ղեկավարման միջոցների (ժամանակակից մեթոդների, ինչպես նաև օպերատիվարձագանքման, առաջացող պրոբլեմների քննարկման և ընդհանրացման մեխանիզմների) և օրենսդրական դաշտի կարգավորման արդյունավետ մեթոդների օգտագործման հնարավորությունը:

Նշված նպատակները իրականացնելու համար կազմակերպությունը իր վրա է ստանձնել հետևալ **ֆունկցիաների** կատարումը և ծառայությունների մատուցումը՝

1. խորհրդատվական ծառայություններ համատիրությունների ղեկավարների, սեփականատերերի և այլ անձանց համար,
2. ուսուցում և դասընթացների կազմակերպում մի քանի ուղղություններով.
 - սկզբնական ծանոթացում ընդարձակ լսարանի համար՝ գործող համատիրությունների նախագահների, անդամների և այլ ղեկավարների համար, ինչպես նաև ընդհանրապես բազմաբնակարան շենքի սեփականատերերի համար,
 - կառավարման և սպասարկման կազմակերպում համատիրությունների կառավարիչների համար,
 - համատիրության ֆինանսական գործունեություն՝ համատիրությունների նախագահների, կառավարիչների և հաշվապահների համար:
3. նոր ստեղծվող համատիրություններին անհրաժեշտ փաստաթղթերի մշակում և ձևակերպում,
4. ՀՍԱԸ- ի անդամների շահերի պաշտպանում պետական, տեղական ինքնակառավարման և այլ մարմիններում,
5. ինֆորմացիոն-տեղեկատվական ծառայություններ,
6. համատիրությունները սպասարկող կազմակերպությունների ընտրման մրցույթների կազմակերպում,
7. համատիրությունների հիմնադրման և գործունեությանը վերաբերող օրենքների, օրենսդրական ակտերի, կառավարության որոշումների քննարկումների կազմակերպում շահագրգիռ կազմակերպությունների և անձանց հետ և

համապատասխան առաջարկությունների ձևավորում, նրանց հետագա ձևակերպում և ներկայացում տեղական ինքնակառավարման մարմիններ, ՀՀ կառավարություն, Ազգային ժողով:

ՀՍԱԸ-ն հիմնվել է 1997թ.: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են`

- անդամավճարներից,
- նվիրատվություններից,
- պայմանագրային հիմունքներով իրականացվող ծրագրերի և առանձին աշխատանքների հաշվին:

Կազմակերպության հիմնադրման օրվանից իրականացվել են Հայաստանում համատիրությունների ստեղծման և գրանցման ծրագրեր:

Բազմաթիվ այլ ուսուցողական, խորհրդատվական օրենսդրական դաշտի կարգավորման և այլ ծրագրեր:

Ներկայումս և ապագայում ՀՍԱԸ – ի **հիմնախնդիրները** կապված են համատիրությունների կայացման, նրանց արդյունավետ գործունեության ապահովման հետ:

Խնդիրների այս շարքում կարևոր դեր և նշանակություն ունեն օրենսդրական դաշտի կարգավորումը, նրա համապատասխանեցումը իրական խնդիրներին և հեռանկարային ծրագրերին, բնակչությանը կոմունալ ծառայությունների մատուցման որակի բարձրացումը:

ՀՍԱԸ – ն պատրաստ է իր խնդիրների հետաքրքրության շրջանակներում համագործակցել այլ կազմակերպությունների, կառավարական, տեղական ինքնակառավարման մարմինների, լրատվամիջոցների, մասնավոր ձեռներեցների, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ:

375010, Հայաստան, Երևան,

Թումանյան 8– 28,

հեռախոս 589625

ֆաքս 589625

E-mail nacoarm@yahoo.com

naco@web.am